

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԳԱԶԱՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՎ ԳԱԶԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՍՈՒՔՅԵԿՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ԵՎ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՄԱՍԻՆ

(Մոսկվա, 2010 թվականի դեկտեմբերի 9)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով Ռուսաստանի Դաշնության եւ Բելառուսի Հանրապետության միջեւ՝ «Մաքսային միության մասին» 1995 թվականի հունվարի 6-ի համաձայնագրի, «Մաքսային միության մասին» 1995 թվականի հունվարի 20-ի համաձայնագրի, «Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի մասին» 1999 թվականի փետրվարի 26-ի պայմանագրի, «Եվրասիական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» 2000 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի վրա,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներով՝ գործածվում են հետեւյալ հիմնական հասկացությունները՝

«գազ»՝ գազանման ածխաջրածնի եւ այլ գազերի դյուրավառ խառնուրդ, որոնք արդյունահանվում եւ (կամ) արտադրվում են Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների տարածքներում եւ հիմնականում բաղկացած են խտացված գազանման վիճակում գազափոխադրման համակարգերով փոխադրվող մեթանից,

«գազափոխադրման համակարգեր»՝ շինություններ գազի փոխադրման համար՝ ներառյալ մայրուղային գազատարների շինությունները եւ միասնական տեխնոլոգիական գործընթացով դրանց հետ կապված օբյեկտները՝ բացառությամբ գազաբաշխման ցանցերի,

«գազի փոխադրման հետ կապված ծառայություններ»՝ գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ծառայություններ,

«իրավասու մարմիններ»՝ սույն Համաձայնագրի կիրարկումը վերահսկելու համար Կողմերի կողմից լիազորված մարմիններ,

«ներքին կարիքներ»՝ Կողմ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի տարածքում սպառման համար անհրաժեշտ գազի ծավալները,

«գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայություններին հասանելիություն»՝ գազափոխադրման համար՝ Կողմ հանդիսացող պետությունների բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից կառավարվող գազափոխադրման համակարգերի օգտագործման իրավունքի շնորհում,

«շուկայական (հավասարակամտաբեր) գներ»՝ գազի մեծածախ գներ, որոնք ձեւավորվել են ներքին կարիքները բավարարելու համար՝ ելնելով, այդ թվում՝ հետեւյալ սկզբունքներից՝

Միասնական տնտեսական տարածքի մասնակից՝ գազ արդյունահանող պետությունների համար շուկայական մեծածախ գնի ձեւավորումն իրականացվում է արտաքին շուկայում գազի վաճառքի գնից հանելով այդ պետություններում գանձվող մաքսատուրքերի, գանձումների, հարկերի եւ այլ վճարների արժեքները, ինչպես նաեւ Միասնական տնտեսական տարածքի գազ արդյունահանող պետությունների սահմաններից դուրս գազի փոխադրման արժեքը՝ հաշվի առնելով գազի մատակարարի արտաքին եւ ներքին շուկաներում գազի փոխադրման արժեքի տարբերությունները.

Միասնական տնտեսական տարածքի մասնակից՝ գազասպառող պետությունների համար՝ շուկայական մեծածախ գին, որի ձեւավորումը իրականացվում է գազ արդյունահանող պետության արտադրողի կողմից արտաքին շուկայում գազի վաճառքի գնից հանելով մաքսատուրքերը, գանձումները, հարկերը եւ այլ վճարները, ինչպես նաեւ Միասնական տնտեսական տարածքի գազ արդյունահանող պետությունների սահմաններից դուրս գազի փոխադրման արժեքը,

«Միասնական տնտեսական տարածքի գազ արդյունահանող մասնակից պետություններ»՝ Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետություններ, որոնց տարածքում ավելի քիչ գազ է սպառվում, քան արդյունահանվում եւ արտադրվում է,

«Միասնական տնտեսական տարածքի մասնակից գազասպառող պետություններ»՝ Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետություն, որոնց տարածքում ավելի շատ գազ է սպառվում, քան արդյունահանվում եւ արտադրվում է:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի նպատակն է գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայություններին հասանելիության կանոնների սահմանումը՝ ներառյալ Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների կարիքները բավարարելու համար գնագոյացման եւ սակագնային քաղաքականության հիմքերի սահմանումը:

Գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայությունները հասանելի են դառնում սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան, որոնք սահմանվել են միայն Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների տարածքներից առաջացած գազի առնչությամբ: Սույն Համաձայնագրի դրույթները չեն տարածվում այն հարաբերությունների վրա, որոնցով կարգավորվում է բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայություններին հասանելիությունը, որը կիրառելի է այն գազի առնչությամբ, որը ծագել է Միասնական տնտեսական տարածքի մասնակից չհանդիսացող պետությունների տարածքներից, ինչպես նաեւ Միասնական տնտեսական տարածքի սահմաններից եւ դեպի այդ տարածք գազի փոխադրման ոլորտի հարաբերությունների վրա:

Հոդված 3

Գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայություններին հասանելիությունն ապահովելիս Կողմերը ելնում են հետեւյալ սկզբունքներից՝

փոխադարձ առեւտրում ներմուծման եւ արտահանման մաքսատուրքեր, (համարժեք այլ տուրքեր, հարկեր եւ գանձումներ) չկիրառելը,

Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների գազի նկատմամբ ներքին կարիքների առաջնահերթ ապահովումը,

Կողմ հանդիսացող պետությունների ներքին կարիքները բավարարելու համար գազի փոխադրման գներն ու սակագները սահմանվում են Կողմ հանդիսացող պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան,

Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների կողմից գազի նորմերի եւ չափանիշների միասնականացումը,

բնապահպանական անվտանգության ապահովումը:

Հոդված 4

Սույն Համաձայնագրով նախատեսված Միասնական տնտեսական տարածքի գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայություններին հասանելիության ապահովման պայմանն է՝ Կողմերի կողմից համալիր միջոցառումների իրականացումը, որը ներառում է՝

ա) մինչեւ 2012 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածը տեղեկատվության փոխանակման հարթակի ստեղծումը այն տեղեկատվության հիման վրա, որը ներառում է գազի ներքին սպառման մասին տեղեկություններ,

բ) մինչեւ 2012 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածը, սույն Համաձայնագրին համապատասխան, ինդիկատիվ կանխատեսվող հաշվեկշիռների պատրաստման համար մեխանիզմների ստեղծումը,

գ) մինչեւ 2013 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածը միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների գազի նկատմամբ կիրառվող նորմերի եւ չափանիշների միասնականացում,

դ) Միասնական տնտեսական տարածքում մասնակից պետությունների գազի համար անցում շուկայական (հավասարակամ տարբեր) գներին,

Կողմերի կողմից վերոնշյալ համալիր միջոցառումների կատարման եզրափակումը ձեւակերպվում է սույն Համաձայնագրին կից արձանագրությամբ:

Հոդված 5

Կողմերն ապահովում են Միասնական տնտեսական տարածքի բոլոր մասնակից պետությունների տարածքներում գազի շուկայական (հավասարակամաբեր) գների ստացումը՝ 2015 թվականի հունվարի 1-ից ոչ ուշ:

Ընդ որում՝ ղազախական կողմն ապահովում է Ղազախստանի Հանրապետության տարածքում գազի իրացման գնի փուլային բարձրացումը՝ մինչև Ռուսաստանի Դաշնության տարածքում գազի գների հետ համեմատելի գների մակարդակը:

Հոդված 6

Բոլոր Կողմերի կողմից՝ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածում շարադրված համալիր միջոցառումները կատարելուց հետո Կողմերը, եղած տեխնիկական հնարավորությունների, գազափոխադրման համակարգի ազատ հզորությունների սահմաններում, հաշվի առնելով Միասնական տնտեսական տարածքի երկրներում գազի համաձայնեցված ինդիկատիվ կանխատեսվող հաշվեկշիռը եւ հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտների քաղաքացիաիրավական պայմանագրերը, ապահովում են Կողմ հանդիսացող պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերին հասանելիությունը Կողմ հանդիսացող այլ պետությունների տնտեսվարող սուբյեկտների գազափոխադրման համար, որը նախատեսված է Կողմ հանդիսացող պետությունների ներքին կարիքները բավարարելու համար, հետեյալ կանոններով՝

Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների տնտեսվարող սուբյեկտների համար, հավասար պայմաններով, Կողմ հանդիսացող այլ պետության գազափոխադրման համակարգը, ներառյալ սակագները, հասանելի դարձնելը, այն գազ արտադրողների կողմից, որոնք չեն հանդիսանում այն Կողմի գազափոխադրման համակարգի սեփականատերեր, որի տարածքով իրականացվում է փոխադրումը,

գազի փոխադրման ծավալները, գները եւ սակագները, ինչպես նաեւ գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման առետրային եւ այլ պայմանները սահմանվում են Կողմ հանդիսացող պետությունների տնտեսվարող սուբյեկտների միջեւ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերով՝ Կողմ հանդիսացող պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան:

Կողմերն աջակցում են իրենց տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների միջև՝ «Մայրուղային գազատարներով գազի փոխադրման մասին» գործող պայմանագրերի պատշաճ կատարմանը:

Հոդված 7

Կողմ հանդիսացող պետությունների իրավասու մարմինները մշակում եւ համաձայնեցնում են Միասնական տնտեսական տարածքի երկրների գազի ինդիկատիվ կանխատեսվող հաշվեկշիռը (արտադրությունը, սպառումը եւ մատակարարումները ներքին կարիքները բավարարելու համար, այդ թվում՝ փոխադարձ) 5 տարի ժամկետով, որը հստակեցվում է յուրաքանչյուր տարի նախքան ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ը:

Հաշվի առնելով գազի համաձայնեցված հաշվեկշիռը՝ Կողմ հանդիսացող պետությունների ներքին շուկաների համար Կողմերը հասանելի են դարձնում գազափոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայությունները:

Հոդված 8

Կողմերը ձգտում են զարգացնել երկարաժամկետ փոխշահավետ համագործակցությունը հետեւյալ ոլորտներում.

- գազափոխադրումը Կողմ հանդիսացող պետությունների տարածքներով,

-գազատարների, գազի ստորգետնյա պահեստարանների եւ գազի սպասարկման համալիրի ենթակառուցվածքի այլ օբյեկտների շինարարությունը, վերակառուցումն ու շահագործումը,

-Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների ներքին կարիքների բավարարման համար անհրաժեշտ սպասարկման ծառայությունների մատուցումը:

Կողմերն ապահովում են Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի գործունեությունը կարգավորող նորմատիվային եւ տեխնիկական փաստաթղթերի միասնականացումը:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի դրույթները չեն ազդում Կողմերի՝ միջազգային այն պայմանագրերից բխող իրավունքների եւ պարտավորությունների վրա, որոնց մասնակիցն են նրանք հանդիսանում:

Գազափոխադրման ոլորտում Կողմերի՝ սույն Համաձայնագրով չկարգավորվող հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Կողմերի ազգային օրենսդրությունը:

«Մրցակցության միասնական սկզբունքների ու կանոնների մասին» Կողմերի համաձայնագիրը կիրառվում է բնական մենաշնորհների այն սուբյեկտների նկատմամբ, որոնք իրականացնում են գազափոխադրում՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրով նախատեսված առանձնահատկությունները:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի կատարման համակարգումը իրականացվում է հետեւյալ իրավասու մարմինների կողմից՝

բելառուսական կողմից՝ Բելառուսի Հանրապետության էներգետիկայի նախարարությունը,

ղազախական կողմից՝ Ղազախստանի Հանրապետության նավթի եւ գազի նախարարությունը,

ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության էներգետիկայի նախարարությունը:

Իրավասու մարմինների փոխարինման դեպքում, Կողմերը դիվանագիտական ուղիներով ծանուցում են միմյանց այդ մասին:

Հոդված 11

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե Կողմերը բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը՝ դրանց անցկացման վերաբերյալ վեճի կողմերից մեկի կողմից մյուս կողմին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա վեճի կարգավորման միջոցի վերաբերյալ Կողմերի միջեւ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը փոխանցել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 12

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի որպես որեւէ Կողմին պարտադրող՝ սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող երրորդ երկրների կամ այդպիսի երրորդ երկրների տնտեսվարող սուբյեկտների, դրանց ապրանքների կամ ծառայությունների վրա տարածելու սույն Համաձայնագրից բխող առավելությունները եւ (կամ) կանոնները:

Հոդված 13

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են արձանագրությամբ:

Հոդված 14

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի դեկտեմբերի 9-ին, մեկ քննարկմանից՝ ռուսերենով:

Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական համայնքի
ինտեգրման հարցերով կոմիտեում, որը սույն Համաձայնագրի ավանդապահն է և
յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված պատճենը:

(ստորագրություններ)